«Թուում է թէ ոմանք ըստ հաճոյից խօսելով, թէ այս ինչ և կամ այն ինչ կողմից օգնութիւն կրհասնի մեզ, մտքերիդ ազդել են... Հաւատեաւ իմացիր, որ այժմ ոչ հիւսիսային տէրութիւնից մեզ օգնութիւն կրհասնի, ոչ էլ ուրիշնե-

---

ազգիս հոգ տանել, և ցուցեալ էիր զոմանս կերպս կարգադրութեան՝ որք ի ջերմեռանդ սիրոյդ և ի ջատագովութենէդ առ ազգս պարզմտութեամբ արտադրին ասութիւնքդ այդոքիկ: Այլ երանի էր՝ թէ զոնեա մասնաւորապէս արդիւնանային. քանզի առ այդ պիտոյ էր ամենայն ազգի մերոյ ընդ հովանեաւ հաւատացեալ և բարեմիտ տէրանց լինել և զապահովութիւն ունել, որ խնամածութեամբ նոցա կարիցէին ձգտիլ առ երջանկութիւնս, բայց ահա ըստ մեծի մասին մատնեցեալք կան ի խստութիւնս թշնամեաց անողորմից, որ հաւատարմապէս ծառայելով ևս չկարեն զողորմութիւն գտանել, ուր մնաց թէ զապստամբութիւն գուցանիցեն, որ բնաւ ոչ իսկ կարեն: Առ այս ասիցես՝ թէ հաճիք ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն. Բայց լինէր՝ թէ օրհնեալդ այժմ յայս կողմունս գայիր և շրջագայէիր ի Ջուղայու մինչև ցաստ և յայլ կողմունս՝ յոր զոն ազգ մեր և ականատես վերահասութեամբ իմանայիր զկացութիւնս մերազնէից և զանօգնականութիւնս և զբռնութիւն իշխողացն և ինքնին կնքէիր՝ թէ այս դիտմանցս յառաջանալ ոչ լինի. ապա թէ հնարաւոր իցէ յառաջանալն միթէ յիմար իցեմք, որ ի տառապանաց գերծանիլ չկամիցիմք... Թուի թէ ոմանք ըստ հաճոյից խօսելով, թէ յայս ինչ յայն ինչ կողմանց ձեռնտուութիւն և օգնականութիւն լինիցի մեզ, գոգացեալ են զմիտսդ... և հաւատապէս իմա, որ ոչ ի հիւսիսական և ոչ յայլոց մեզ այլելութիւն կարէ լինել այժմ, բաց յԱստուծոյ: Եւ ի շրջապատեցեալ գոլս մեր ի թշնամեաց եթէ նշան երևիցի յարելոյ և հայելոյ առ կարծեցեալ օգնիչն առաջի կայ նեղութիւն, խռշտանկումն, յափշտակութիւն և սուր. իսկ եթէ անստոյգ համարիցիս զզրեալքս և դարձեալ անսայցես նոցա՝ որք կհաճոյականս խօսին, ապա յայլոց հաւատարմաց տեղեկացիր՝ եթէ յանցեալ ամսն մինչ Արցախեցեաք ձգտեցան առ ապաւինութիւն նոցա, ի բռնաւորէն իւրեանց զինչ անցք անցին ընդ նոսա, զիա՞րդ մահացաւ խղճալի Յովհաննէս կաթուղիկոսն և ո՞ւրպէս աղաւաղեցաւ սուրբ Ամոռն Գանձասարու. և այժմ ո՞ւր են մելիքաղունքն, և զի՞նչ կրեցին (որ և ի յառաջանալ այնց դառնութեանցն ի քանի՞ տեղեաց գրեցին առ մեզ զբանս գովութեան՝ թէ յոյժ բարւոք էր՝ որ դուք ոչ ցուցիք առ նոսա զնշան համակամութեան և անվընաս պահեցիք զսուրբ զահդ) և ի տեղեկանալդ զայսմանէ ստուգութեամբ, ապա ընտրեա զսուտն և զիրաւն և անմեղադիր լեր մեզ»:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան